և Շխլար ճամբով ու հոն կը հասնի Նոյ. 8ին ու կը մնայ մինչև Նոյ. 25, այդ միջոցին այցելելով Ատիշ և Զնքուշ (Թղ. 198ա - 198բ)։

Նոյ. 25ին կը մեկնի Զնքուշի վանքէն. կը հանդիպի Ծովք, Ղուլուլու, Խօլավանք, Թլկատին, Քօմուրխան, Օրթախան, Մալաթիա, Հասանպատրըխ, Հէքիմխան, Ալմալիտէրէսու, Ալաճախան, Ղանղալ, Տէլիքլիտաշ, Թէճէլպուռուն, Սեբաստիա (Դեկտ. 11 - 14), Պուլանուխ և Դեկտ. 15ին կը հասնի Թօխաթ, ուր կը մնայ մինչև **1696** Մայիս 28 (Թղ. 198բ-203բ)։

Մայիս 28ին կը մեկնի Թօխաթէն. կը հանդիպի Կոմանա, Ճինճիփէ, Առմուսա, Գայլ գետ (անցք), Անահու լեռ, Տաշթէքնէ, Օթլուտէրէ, Պաղարսուխտէրէ, Ղօլլասար, Ապանու չայիր, Զուման (Քրթաց օպաներ), Պալախուրայ գետ, Եզնկանու հանդէպ, Օթլուպէլի ձոր, Ղարաղուլախ, Ալիմէյտան, Թօփալչաւուշայ և Տուզլայու հանդէպ, Ճինիսու չայիր, Իլիճա և Յունիս 19ին կը մտնէ Էրզրում, ուր կը մնայ մինչև Յուլիս 23 (Թղ. 203բ - 205բ)։

Յուլիս 23ին կ'ելլէ Էրզրումէն ու կը հանդիպի Էրզրումի վանքը, Դու, Հասանղալայի վանքը, Սօկութլու, Սանամէրու գետը (անցք), Ղարս, Ղօշավանք, Ղփչախ, Պաշապարան, Ղըզըլքօյ, Սաղմոսավանք, Օհանավանք (Օգոստ. 6). հոն կ'ողջունէ Նահապետ կաթողիկոսը ու միասին կ'երթան Երևանի Ս. Սարգսի վանքը, և Օգոստ. 10ին կը մտնեն Էջմիածին (Թղ. 205բ-206ա)։

1696 Օգոստ. 10էն **1698** Օգոստ. 16 կը մնայ Էջմիածին։ 1696 Նոյ. 1ին Ջուղայեցի Ստեփանոս վրդ. կը գրաւէ հայրապետական աթոռը և հետևեալ օրը, Նոյ. 2, շաբաթ, 12 եպիսկոպոսներով, որոնց կը նախագահէ Ամդեցի, կ'օծուի կաթողիկոս։ Նոյն օրը, կը գրէ Ամդեցի, «Ջճուղաեցի Ստեփանոս վարդապետն կաթողիկոս ձեռնադրեցի. ԺԲ եպիսկոպոս զգեստաւորեցան, ես եդի ձեռն ի վերայ և ես օծի զգագաթն. Սահակ վարդապետն քարոզ. օծմանն ծանուցումն ես և ժողովուրդ քիչ» (Թղ. 208բ)։ Հինգ օր վերջ, Նոյ. 7ին, կ'երթայ Ղօշավանք ու հոն կը մնայ մինչև **1697** Յունուար 15։ Նոյն օրը կը մեկնի Ղօշավանքէն ու հանդիպելով Թալին և Փարպի՝ Յունուար 17ին կը հասնի Ս. Սարգսի վանքը և հոն կը մնայ մինչև Փետր. 4։ Նոյն օրը կ'երթայ Երևան և կ'ողջունէ Նահապետ կաթողիկոսը, որ Ստեփանոս Ջուղայեցին ձգած ու վերստին տիրացած էր հայրապետական աթոռին։ Փետր. 18ին կը դառնայ Էջմիածին՝ մերթ ընդ մերթ երթալով շըր-